

ԵԼՀ ֆակուլտետի գիտխորհրդի՝
17.06.2021թ. նիստի N 11 արձանագրություն

Օրակարգ

1. Բակալավրիատի և մագիստրատուրայի ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքների ամփոփում:
2. Ֆակուլտետի մեթոդ. խորհրդի 2020-2021 ուս. տարում կատարած աշխատանքների հաշվետվություն:
3. ԵԼՀ ֆակուլտետի ուս. խորհրդի նախագահի 2020-2021 ուս. տարում կատարած աշխատանքների հաշվետվություն:
4. ԵԼՀ ֆակուլտետի անգլիական բանասիրության ամբիոնի պրոֆեսորի և անգլերենի թիվ 1 ամբիոնի դոցենտի թափուր պաշտոնների տեղակալման մրցութային ընտրություն :
5. Ընթացիկ հարցեր:

Գիտխորհրդի 36 անդամներից նիստին ներկա էին 27-ը :

ԵԼՀ ֆակուլտետի դեկան Գ.Բարսեղյանը ողջունեց գործընկերներին՝ նշելով, որ ուրախ է նրանց տեսնել դեմ առ դեմ: Նա անդրադարձավ օրակարգի առաջին հարցին՝ ԵԼՀ ֆակուլտետի բակալավրիատի և մագիստրատուրայի ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքների ամփոփմանը: Գ.Բարսեղյանը ավարտական աշխատանքների գործընթացը գնահատեց դրական, կարևորեց ամբիոնների և ամբիոնների ղեկավարների լայնախոհ ու հետևողական աշխատանքը այս գործընթացում : Նա հավելեց, որ բավականին լավ արդյունքներ և բարձր նիշեր են արձանագրվել ավարտական աշխատանքների պաշտպանության գործընթացում :

Բակալավր/ առկա ուսուցում/

անգլերեն լեզու, գրականություն

85 ուսանող

26 գերազանց , 49 լավ, 10 բավարար

Գերազանցության դիպլոմ ստացել են 14 ուսանող :

Գերմաներեն լեզու, գրականություն

11 ուսանող, 7 գերազանց, 3 լավ, 1 բավարար

Գերազանցության դիպլոմ ստացել են 2 ուսանող :

Ֆրանսերեն լեզու, գրականություն

19 ուսանող, 15 գերազանց, 3 լավ, 1 բավարար

Գերազանցության դիպլոմ ստացել են 11 ուսանող :

Իտալերեն լեզու

3 ուսանող՝ գերազանցության դիպլոմով

Իսպաներեն լեզու

10 ուսանող, 5 գերազանց, 3 լավ, 2 բավարար

Գերազանցության դիպլոմ ստացել են 4 ուսանող :

Թարգմանչական բաժին

79 ուսանող, 42 գերազանց, 33 լավ, 4 բավարար

Գերազանցության դիպլոմ ստացել են 11 ուսանող :

ԼՄՀ

82 ուսանող, 42 գերազանց, 39 լավ, 1 բավարար

Գերազանցության դիպլոմ ստացել են 20 ուսանող :

Բակալավրիատի անգլերեն լեզու գրականություն/ հեռակա ուսուցում/

29 ուսանող, 9 գերազանց, 12 լավ, 8 բավարար

Գերազանցության դիպլոմ ստացել են 2 ուսանող :

Գ.Բարսեղյանը նշեց, որ ուսանողները հաջողությամբ հաղթահարել են նաև մանկավարժական կրթաբովանդակության ավարտական քննությունը :

Մագիստրատուրա, անգլերեն լեզու և գրականություն /առկա ուսուցում/

16 ուսանող, 14 գերազանց, 2 լավ

Գերազանցության դիպլոմ ստացել են 14 ուսանող :

Կիրառական լեզվաբանություն

5 ուսանող, 2 գերազանց, 3 լավ

Գերազանցության դիպլոմ ստացել են 2 ուսանող :

Գերմաներեն լեզու

2 ուսանող՝ գերազանցության դիպլոմով :

Իսպաներեն լեզու

5 ուսանող, 4 լավ, 1 բավարար

Գերազանցության դիպլոմ ստացել են 4 ուսանող :

Իտալերեն լեզու

2 ուսանող՝ գերազանցության դիպլոմով

Ֆրանսերեն լեզու

6 ուսանող 2 գերազանց, 4 լավ

Գերազանցության դիպլոմ ստացել են 2 ուսանող :

ԼՄՀ/միջազգային գործարար հաղորդակցություն/

28 ուսանող, 24 գերազանց, 4 լավ

— յուրաքանչյուր տարվա նման՝ այս ուսումնական տարվա հունիսին ևս, սկսվում է կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույցի և դասընթացների տեղեկագրքի էլեկտրոնային տարբերակի վերանայումը:

Նշվեց նաև, որ այս աշխատանքը բավականին ծավալուն և ժամանակատար է: Կատարվել է նաև համակարգչի մասնագետի աշխատանք: Ըստ այդմ, նա խնդրեց ամբիոններին համագործակցել դեկանատի և իր հետ այս գործում: Ն.Հարությունյանը վստահութիւն հայտնեց, որ նոր ուսումնական տարվա սկզբից վերադառնալու են բնականոն կյանքին և ուսումնական գործընթացին, որ արդյունավետ կլինի՝ ավանդական ուսուցման հետ մեկտեղ կիրառել նաև հեռավար ուսուցման Moodle առցանց հարթակը՝ հիբրիդային դասավանդման մեթոդով: Այս մեթոդը հատկապես արդյունավետ է դասախոսությունների և գործնական առաջադրանքների կատարման ժամանակ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Ն.Հարությունյանի հաշվետվությունը գնահատել դրական:

3. Գ.Բարսեղյանը անդրադարձավ օրակարգի երրորդ հարցին և հրավիրեց ԵԼՀ ֆակուլտետի ուս. խորհրդի նախագահին՝ ներկայացնելու 2020-2021 ուս. տարում կատարած աշխատանքների հաշվետվությունը:

ԼՍԵՑԻՆ՝ Լ.Տեր-Հովհաննիսյանը ներկայացրեց 2020-2021 ուս. տարում կատարած աշխատանքների հաշվետվությունը՝ նշելով, որ իրեն բաժին հասավ ամենաբարդ հատվածը՝ համավարակի և պատերազմի առումով, բայց աշխատանքները չեն տուժել և հնարավորինս արդյունավետ են կատարվել: 2020-2021 ուս. տարվա ընթացքում ունեցել են ինֆորմատիվ հանդիպումներ, դիմավորել են առաջին կուրսեցիներին, փորձել են ուսանողներին օժանդակել քննությունների ու լուծարքների հարցում: Կատարել են նաև բարեգործություններ, հանդիպումներ հայտնի մարդկանց հետ, խաղաղության կորպուսի կամավորների հետ: Նա նշեց, որ իրենց թիմի ակտիվ անդամներից շատերը մենկնելու են կրթությունը շարունակելու ERAZMUS ծրագրով: Լ. Տեր-Հովհաննիսյանը իր երախտագիտությունը հայտնեց դեկան Գ.Բարսեղյանին և

ԼՍՀ ամբիոնին ամեն հարցում իրենց թիմին օժանդակելու համար և ԼՍՀ ամբիոնին քննությունների ու լուծարքների հարցում մեծ օգնության համար:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Լ.Տեր-Հովհաննիսյանի հաշվետվությունը գնահատել դրական:

4. Գ.Բարսեղյանը անդրադարձավ օրակարգի չորրորդ հարցին՝ անգլիական բանասիրության ամբիոնի պրոֆեսորի և անգլերենի թիվ 1 ամբիոնի դոցենտի թափուր պաշտոնների տեղակալման մրցութային ընտրությանը: Ընտրվեցին հաշվիչ հանձնաժողովի անդամներ՝ նախագահ Ա.Չուբարյան, անդամներ՝ Ռ.Ղազարյան, Ս.Ջավադյան:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ /պրոֆեսորի և դոցենտի թափուր պաշտոնի ընտրություն/

- **ԼՍԵՑԻՆ**՝ Անգլիական բանասիրության ամբիոնի պրոֆեսոր, բ.գ.դ.

Ալվարո Ջիվանյանին ամբիոնի պրոֆեսորի թափուր պաշտոնում

ընտրելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր
Ս.Բ.Գասպարյանը

ներկայացրեց Ալվարո Ջիվանյանի գիտամանկավարժական գործունեությունը՝
շեշտադրելով

Ա.Ջիվանյանի կատարած երկարատև ու քրտնաջան աշխատանքը, որի արդյունքում
նա

հասել է կարևոր ձեռքբերումների ինչպես գիտության, այնպես էլ դասավանդման
բնագավառներում:

Նա բազմաթիվ գիտական աշխատանքների հեղինակ է, նրա գիտական
ղեկավարությամբ

պաշտպանվել է 5 թեկնածուական ատենախոսություն: Գնահատանքի է արժանի նաև
նրա

հասարակական գործունեությունը. նրա նախաձեռնությամբ կազմակերպվել են
հանրապետական և

միջազգային գիտաժողովներ, որոնք աչքի են ընկել մասնագիտական և կազմակերպական

արդյունավետությամբ: Ելույթ ունեցան նաև ռոմանական բանասիրության ամբիոնի վարիչ Հ.

Բադդասարյանը, պրոֆեսորներ Ն. Հարությունյանը և ուրիշներ, որոնք դրվատանքի խոսքեր ուղղեցին

Ա. Ջիվանյանի հասցեին, նշեցին նրա մասնագիտական բարձր գիտելիքների և մարդկային որակների

մասին և առաջարկեցին հաշվի առնել, որ Ա. Ջիվանյանը վայելում է թե՛ ուսանողների և թե՛

գործընկերների սերն ու հարգանքը, և նրա տվյալները լիովին բավարարում են պրոֆեսորի պաշտոնին

ներկայացվող պահանջները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաշվի առնելով առաջ քաշված դրական կարծիքները՝

Ալվարդ Ջիվանյանին ընտրել ԵՊՀ եվրոպական լեզուների և

հաղորդակցության ֆակուլտետի անգլիական բանասիրության ամբիոնի

պրոֆեսորի պաշտոնում:

Փակ գաղտնի քվեարկության արդյունքները՝ կողմ՝ 27

դեմ՝ 0

անվավեր՝ 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

- **ԼՍԵՑԻՆ՝** Անգլերենի թիվ 1 ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Ռուզաննա Կարապետյանին ամբիոնի դոցենտի թափուր պաշտոնում ընտրելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Անգլերենի թիվ 1 ամբիոնի վարիչ բ.գ.թ., պրոֆեսոր

Մ.Ապրեսյանը խոսեց Ռ. Կարապետյանի կատարած ուսումնամեթոդական և գիտամանկավարժական աշխատանքի, ինչպես նաև ամբիոնի մի շարք ծրագրերում

նրա ակտիվ մասնակցության՝ մասնավորապես FLSP միջազգային պարբերականի խմբագրական աշխատանքներում ծավալած գործունեության մասին: Մ. Ապրեսյանը նշեց, որ Ռ. Կարապետյանն ունի տպագրված 1 դասագիրք, 21 գիտական հոդված, որոնցից 6-ը տպագրվել են միջազգային հայտնի պարբերականներում, 1-ը Սկոպուս (Scopus) գիտատեղեկատվական շտեմարանում, ինչպես նաև 7 թեզիս, որոնցից 4-ը տպագրվել են միջազգային ամսագրերում՝ հավելելով, որ Ռ. Կարապետյանն ունի բարձր մասնագիտական հմտություններ և մշտապես աշխատում է նորացնել իր գիտելիքները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաշվի առնելով առաջ քաշված դրական կարծիքը՝ Ռուզաննա Կարապետյանին

ընտրել ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի անգլերենի թիվ 1 ամբիոնի

դոցենտի պաշտոնում: Փակ գաղտնի քվեարկության արդյունքները՝ կողմ՝ 24

դեմ՝ 1

անվավեր՝ 2

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

- Գ. Բարսեղյանը հրավիրեց Ն.Մադոյանին ներկայացնելու հետազոտական բաղադրիչի հետ կապված հարցը: Փոխդեկան Ն.Մադոյանը ներկայացրեց հետազոտական աշխատանքի առանձնահատկությունները՝ խնդրելով ամբիոնի վարիչներին ներկայացնել այդ հարցի շուրջ ծագած խնդիրները, առաջադրանքները: Ս. Գասպարյանը հավելեց Ն.Մադոյանի խոսքին՝ ասելով, որ որոշ նկատառումներ դիտարկվել են այդ առումով, բայց ոչ լիարժեք, քանի որ քովիդային պայմանները խանգարեցին հավուր պատշաճի և խորքային հենքի տակ դիտարկել այդ հարցը: Ս.Գասպարյանը կիսվեց մտահոգությամբ՝ նշելով գրագողության ծրագրի բացակայության մասին:
- Որոշեցին երաշխավորել անգլիական բանասիրության ամբիոնի բ.գ.թ.Նարինե Գասպարյանի՝ “Brush Up Your Talk” ուսումնամեթոդական ձեռնարկը տպագրության: Որոշումն ընդունվեց միաձայն:
- Որոշեցին երաշխավորել անգլերենի թիվ 2 ամբիոնի դասախոսներ

Գ.Հովհաննիսյանի և Մ.Կարապետյանի “All About the English Adjective in Figurative Use” երկհատոր ուսումնական ձեռնարկը տպագրության: Որոշումն ընդունվեց միաձայն :

ԵԼՀ ֆակուլտետի

դեկան և գիտխորհրդի նախագահ,

բ.գ.թ., դոցենտ՝



Գ.Բարսեղյան

Գիտխորհրդի քարտուղար, բ.գ.թ., դոցենտ՝



Մ.Ֆալալյան